«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
ОАО "МАКУР ЕРКАТИ ГОРЦАРАН"
("Завод чистого железа")
OJSCo "MAKUR ERKATI GORTSARAN"
("Plant of Pure Iron")

Reg. N 788811161059

0053, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արցախի 75
0053, Республика Армения, г. Ереван, пр. Арцахи 75
75 Artsakhi Ave, Yerevan, Republic of Armenia, 0053

Tel.: (374 11) 474260
E-mail: info@pureironplant.am

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0053, Արցախի 75

հեռ. (+374 11) 474260, (374 11) 474131

էլ. փոստ՝ info@pureironplant.am

Ինտերնետային կայք՝ http://pureironplant.am

Հաշվետվություն թիվ 1, 24.02.2021

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Սույնով տեղեկացնում ենք, որ 2019 թվականի օգոստոսի 15-ին կայացել է «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ Ընկերության կողմից խոշոր գործարքի կնքմանը հավանություն տալու և դրա էական պայմանները հաստատելու հարցի վերաբերյալ օրակարգով և 2019 թվականի դեկտեմբերի 28-ին, տեղի է ունեցել «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ Ընկերության կողմից խոշոր գործարքի կնքմանը հավանություն տալու օրակարգով: Ընկերության խորհրդի և բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների կողմից կայացված որոշումների հիման վրա «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲ ընկերության և «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերության միջև կնքվել է բաժնետոմսերի առուվաճառքի և փոխանցման պայմանագիր, որով «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերությանը պատկանող ԶՊՄԿ թվով 412 250 հատ և ԶՊՄԿ-ի կանոնադրական կապիտալի շուրջ 15 տոկոսը կազմող բաժնետոմսերը ձեռք են բերվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից: Վերը նշված արտահերթ ընդհանուր ժողովներին դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի մոտ առաջացել է իրենց պատկանող՝ Ընկերության բաժնետոմսերի հետգնման գնի որոշման և բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում պահանջելու իրավունք:

Գլխավոր տնօրեն
Հակոբյան